



Թերեզա ԱՄՐՅԱՆ

Խատուոնի թուրքական ոսկեղենը

Տասնհինգամյա Խատուոնը բռնել է իր երեք տարեկան եղբոր ձեռքը և դանդաղ քայլում է հայրական տան այգում: Փոքրիկ տղան քաշում է քրոջ ոսկե թևնոցը, Խատուոնը մի կողմ է տանում եղբոր փոքրիկ ձեռքերը և գրկում է նրան: Երեխան փորձում է քաշել Խատուոնի սև մագերը, ձեռք տալ նրա ոսկե վզնոցին և սկանջօղերին . այդ ոսկեղենը Խատուոնը նվեր է ստացել իր արտասահմանյան եզդի փեսացուից: Խատուոնի ընտանիքի անդամները տանը չեն, տեղ են գնացել: Արդեն մի քանի ամիս է Խատուոնին իրենց հետ ոչ մի տեղ չեն տանում . հարկավոր չէ, որովհետև Խատուոնին արդեն նշանել են: Մանկամարդ Խատուոնն արդեն հարսնացու է, մի քանի ամսից նրան ամուսնու մոտ՝ արտասահման կուղարկեն: Խատուոնն ընտանիքի երրորդ աղջիկն է: Նրա երկու ավագ քույրերին ամուսնացրել են: Խատուոնից փոքր երկու քույրերին էլ հինգ-վեց տարի հետո կնշանեն: Խատուոնին նշանելուց հետո ազգականներն ու բարեկամները շատ ուրախացան, հայրը թեթևացած շունչ քաշեց, իսկ մոր տարեց հորաքույրն ասաց.

– Լավ է, այս աղջկանից էլ պրծան: Աղջիկ են էլի, թող ամուսնանան . գնան, իրենց ծնողների վզից դուրս գան...

Բոլորն ուրախացան . . . Բացի Խատուոնի տատից՝ բոլորն ուրախացան: Չգիտես ինչու էր մթնել տատը, չգիտես ինչու էր այդպես լուռ ընդհամանում Խատուոնի արտասահմանյան եզդի փեսացուի գոյությունը:

Գարնանային արևը տերևների արանքից մի կերպ սողոսկել և կանաչ երանգ է տարածել Խատուոնի կարմիր շարֆին: Խատուոնին ընտանիքի անդամները չեն

թողնում, որ Խատունն անգամ արևի տակ զբոսնի . թող մաշկը չսևանա . չէ՞ որ նրան շուտով արտասահման են ուղարկելու: Խատունը խնամքով ուղղում է թևնոցներն ու ականջօղերը՝ փեսացուի նվերները: Չէ՛, չէ՛, փեսան արտասահմանից չի ուղարկել դրանք . փեսացուի ծնողներն ու ազգականներն այդ նվերները Խատունի համար գնել են երևանյան մի ոսկու շուկայից՝ թուրքական ոսկեղենի բաժնից:

Խատունն իր արտասահմանյան փեսացուին չի ճանաչում, միայն նրա նկարն է տեսել . նշանվելուց հետո երկու անգամ տեսագանգի միջոցով զրուցել է փեսացուի հետ: Ամեն անգամ ոսկյա զարդերն ուղղելիս Խատունը սկսում է մտածել նրա մասին, նրան պատկերացնում է որպես բարձրահասակ, ամրակազմ տղամարդ: Լսել է, որ արտասահմանյան բոլոր եզդի փեսացուները բարձրահասակ են, ամրակազմ: Լսել է, որ արտասահմանյան եզդի փեսացուները հեռվից հեռու Հայաստանում են եզդի հարսնացուներ փնտրում: Նրանք լավ գիտեն, որ Հայաստանի եզդի հարսնացուները համարվող, խոնարհ ու հավատարիմ կանայք են դառնում: Հայաստանի եզդի հարսնացուները շատ պահանջկոտ չեն, միայն թե փեսացուն եզդի լինի:

Նշանադրությունից հետո հայրը Խատունին դպրոցից հանեց: Դասագրքերն այլևս Խատունին հարկավոր չեն . չէ՞ որ նրան շուտով արտասահման են ուղարկելու: Հարսանիքից մի քանի օր հետո Խատունի արտասահմանյան եզդի ամուսինը կսկսի վաղ առավոտյան աշխատանքի գնալ և վերադառնալ շատ ուշ . երբեմն էլ կգնա ու չի գա տուն: Խատունն ամբողջ օրը մենակ կմնա . չէ՞ որ արտասահմանյան եզդի փեսայի ծնողներն էլ Խատունի ծնողների պես Հայաստանում են մնացել: Խատունը ոչ մի ընկերուհի չի ունենա, Խատունը մենակ տանը նստած չի կարողանա սովորել ու հասկանալ այլ երկրի լեզուն, Խատունն օտար երկրում ոչ մեկի հետ հարևանություն չի անի . երբեմն շքամուտքում կբարևի տարեց հարևանուհուն՝ գնչու մի կնոջ՝ հալո, հալո: Գնչուհու գլխաշորն ու գնդիկների տեսք ունեցող ականջօղերը տեսնելիս Խատունը կհիշի իր տատիկի գլխաշորն ու ականջօղերը :

Կանգնեն Խատունի արտասահմանյան օրերը պարապ ու գունատ: Մի օր Խատունի ոսկե զարդերից մեկը կկոտրվի: Խատունն ամուսնու ձեռքը բռնած նեղ

փողոցներով կքայլի՝ ոսկերիչ վարպետների մոտ գարդը նորոգելու:
Խոշորացույցով կոտրված գարդն արհեստական լույսի տակ տնտղելուց հետո
վարպետները կշարժեն իրենց գլուխները, փշրված գարդի կտորները
կվերադարձնեն Խատունի ամուսնուն և անձանոթ լեզվով ինչ-որ բան կասեն:

Խատունն ամուսնու հետ կքայլի մի անձանոթ շուկայի միջով:

– Օն օյդո, օն օյդո, օն օյդո, – ամենուրեք կլսվի շուկայում:

– Ի՞նչ է նշանակում «օն օյդո», – կհարցնի Խատունը:

– «Օն օյդո» նշանակում է «մի եվրո»: Այս ժամերին միրգն էժանանում է,
առևտրականներն արագ վաճառում են, ծածկում են իրենց սեղանները և տուն
գնում, – կպատասխանի Խատունի ամուսինը:

– Ինչքան շատ թուրք կա այստեղ, – կասի Խատունը:

– Հա, սա թուրքական շուկա է, մենք հիմա թուրքերի թաղամասում ենք, –
կպատասխանի Խատունի ամուսինը, ապա կավելացնի, – իմ թուրք ծանոթի
հայրը ոսկերիչ է, նրան կխնդրեմ նորոգել գարդը:

Կոտրված գարդը տնտղելուց հետո թուրք ծանոթի հայրը ժպտալով կասի .
«Օլում, բու բակիր»:

Խատունի ամուսինը կվերցնի գարդի կտորները:

– Ինչու՞ չնորոգեց: Ոսկին կե՞ղծ էր, – կհարցնի Խատունը:

– Մի՛ նվնվա, – սրտնեղած կպատասխանի ամուսինը:

Եվ նորից կքայլեն «օն օյդո, օն օյդո» բղավող մարդկանց շարքերի միջով .
պեպենոտ դենքով մի անձանոթուի կկտրի եզրի գույգի ճամփան, ոտքից գլուխ
կտնտղի Խատունին և հարցական կնայի Խատունի ամուսնուն: Խատունի
ամուսինն օտար լեզվով ինչ-որ բաներ կասի նրան և քաշելով Խատունի թևը՝
առաջ կքայլի:

– Ո՞վ էր այդ կինը, – կհարցնի Խատունը:

– Ավելորդ հարցեր մի՛ տուր, ոսկեղենդ վերցրո՛ւ և տանը վե՛ր ընկիր, – կոպտորեն կպատասխանի ամուսինը:

Պատուհանի մոտ մենակ կանգնած՝ Խատունը կարտասավի, դրսում կտեսնի գնչու հարևանուհուն, կհիշի իր տատիկին, կհիշի տատիկի խոսքերը:

– Իմ խեղճ երեխային ո՞նց եք արտասահման ուղարկելու . ու՞ր է փեսան . փեսայի նկարին նայելով՝ ձեր աղջկան տվեցիք նրան, նկարից ի՞նչ իմացաք, արդյոք արժանավո՞ր տղամարդ է . . . Արդյո՞ք այդ տղան իմ խեղճ երեխայի համար ամուսին կդառնա:

Նորից Խատունին տանը մենակ թողնելով՝ ամուսինը կգնա . ու՞ր կգնա . երևի կգնա շուկայի պեպենոտ անծանոթուհու մոտ, որի հետ այդպես էլ չծանոթացրեց Խատունին: Տանը մենակ նստած Խատունը կմտածի՝ տեսնես ինչու էր տեսազանգով փեսացուն իր աչքին այդքան լավը թվում: Տեսնես ինչու՞ տեսազանգն իսկական փեսացուին ցույց չէր տալիս: Տեսազանգով գրուցելիս Խատունն ու փեսացուն նայում էին Էկրանին ու փոքր տեսախցիկին, որոնք չէին փոխանցում ո՛չ բույր, ո՛չ հույզ, ո՛չ իրականություն:

Շատ Խատունը կհիշի իր նշանդրեքից մի քանի ամիս առաջ գյուղ եկած երիտասարդներին, որոնք գյուղապետարանի շենքի մոտ իրենց շուրջ հավաքեցին մարդկանց և ճառեր ասացին . պատմեցին, որ շուտով ամեն ինչ կփոխվի, որ բոլոր եզդի աղջիկներն ու տղաները ուսում կստանան . . . Ասացին, որ իրենք չգիտես որտեղից ազատություն և հավասարություն կբերեն, կնվիրեն աշակերտուհիներին, աշակերտներին: Գյուղի երիտասարդները նախանձով հիացան ճառասաց հյուրերի գունավոր շապիկներով, կանայք թերահավատորեն նայեցին այդ կրթված եզդի ջահելներին, գյուղի տղամարդիկ կեղծավորաբար տմբտմբացրին իրենց գլուխները՝ ձևացնելով, թե համաձայն են պերճախոս հյուրերի հետ: Ազատության և հավասարության քարոզիչները լուսանկարվեցին բոլորի հետ, խոստացան, որ նորից կվերադառնան ու հեռացան: Մի ամիս հետո Խատունին նշանեցին և դպրոցից հանեցին:

Այս պահին իր հայրական տան այգում, եղբոր ձեռքը բռնած, ծառերի տակ ճենող մանկամարդ եզդի հարսնացուն չգիտի, թե ինչ է լինելու ապագայում . նա հիանում է իր ոսկե գարդերի փայլով, նա երբեք այդքան գարդ չի ունեցել:

Խատունը չգիտի, որ թուրքական ոսկեղենը նրա փեսացուի ծնողներն ու բարեկամներն են գնել երևանյան ոսկու շուկաներից մեկից:

Չգիտի, որ արտասահմանյան եզդի փեսացուները օրուգիշեր աշխատում են՝ չգիտես ում համար, չգիտես ինչի համար:

Չգիտի, որ արտասահմանյան եզդի փեսացուներից շատերը պեպենոտ անձանոթուհիների երկրորդ կեսն են:

Չգիտի, որ թուրքական ոսկին շուտ է կոտրվում . հաճախ այդ ոսկին կեղծ է:

Չգիտի, որ գյուղ եկած ճառասաց երիտասարդների թավշյա գաղափարները չեն մտնի իր հոր տան պատերից ներս . ճառասացները կխոստանան նորից գալ և այլևս չեն վերադառնա:

Չգիտի, որ արտասահմանյան իր եզդի փեսացուն էլ այդ ոսկու նման կեղծ կլինի: